

Միլանի պոլիտեխնիկ, Իտալիա

Ուսումնառության ժամկետը՝ 5 ամիս

Ժամանակաշրջանը՝ 2019-2020 ուստարի, 1-ին կիսամյակ

Աստիճանը՝ մագիստրատուրա (կարող են դիմել 1-ին կուրսի ուսանողները)

Ոլորտը՝ ճարտարապետություն

Ուսումնառության լեզուն՝ անգլերեն (առնվազն B2 մակարդակ)

Առկա տեղերը՝ 4

Մրցույթին մասնակցելու նպատակով անհրաժեշտ է հետևյալ փաստաթղթերն **անգլերեն լեզվով** մինչև **2019թ. մարտի 15-ը** ներկայացնել ՃՇՀԱՀ միջազգային կապերի վարչություն (2212 սենյակ), իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել international@nuaca.am էլ. հասցեին:

- Ինքնակենսագրություն (EUROPASS ձևաչափով)
- Առաջադիմության վերաբերյալ տեղեկանք (ՄՈԳ)
- Անգլերենի իմացության հավաստագիր (TOEFL կամ IELTS), որի բացակայության դեպքում կիրականացվի անգլերենի իմացության ստուգում
- Հիմնավորող գրություն (Motivation Letter)

Ուսանողների ընտրության չափանիշներն են՝ առաջադիմությունը, անգլերենի իմացությունը, կարողությունները, հմտությունները:

Մրցույթն անցկացվելու է հարցազրույցով: Մրցույթի անցկացման օրը և ժամը լրացուցիչ կտեղեկացվեն փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներկայացրած ուսանողներին:

Հարցերի դեպքում կարող եք դիմել միջազգային կապերի վարչություն (2212 սենյակ, հեռ.՝ 010580177):